**452. ՆԱԽՈՐԴԻՑ ՆԵՐՔԵՎ 5 տող.**

Թվ. :ՈԱ: (1152). Ես ճոrs կանգնեցի զխաչս եղբաւր իմ Զարբսզա ի բարեխաւս:

*Հրատ. Տէր-Մովսիսեան, Ազգ. Հանդ., XXV, 78։*

**453. ԵԿԵՂԵՑՈՒ** *պատի վրա՝*

Ես Մամխիսաքուն միաբանեցայ սուրբ ուխտիս. առաջնորդ Յովաննէս և եղբարfս տուին :Բ: ժամ:

*Հրատ. Ջալալեանց, II, 229։ Բարխուդարեանց, 211։*

**453ա. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ** *վրա՝*



ՅԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ|ՅՈՀԱՆԻՍԻ Ա|ՌԱՋՆՈՐԴ ՄԲ| ՈՒԽՏԻՍ:

Լուսանկ. 99ա

**453բ. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ** *վրա՝*



ԱՅՍ Է ՀԱՆԳԻ|ՍՏ ԲԱՐԷՊԱՇ|Տ ԻՇԽԱՆԻՆ Խ|ՈՍՏՐՈՎԿԱՑ|ՈՐԴՈՑ ՀԱՍԱ|ՆԱՑ:

Լուսանկ. 99բ.

## 32. ՍՈՖՈՒԼՈՒ ԳՅՈՒՂ—ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ

*Այս գյուղը գտնվում է Մարդակերտի շրջանին կից Ադրբեջանական Աղդամի շրջանի մեջ։ Գյուղի սահմանում են կանգնած այժմ Գյավուր Ղալա կոչվող բերդի և նրա շրջապատում գտնվող բնակավայրի ընդարձակ ավերակները, որոնք հայերը անվանում են Թգրանակերտ, իսկ ադրբեջանցիները՝ Թառնակերտ։ Սրանք Սեբեոսի կողմից հիշատակված Տիգրանակերտ ավանի մնացորդներն են[1]։ Ջալալյանցն[2] ու Բարխուդարյանցն[3] այնտեղ նկատել են շուկայի, բաղնիքների, եկեղեցիների և այլնի մնացորդներ։ Գյավուր Ղալայի ավերակներից Բաքվի պատմության թանգարան է տեղափոխվել մի գերեզմանաքար։*

---

1 «Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն», Թիֆլիս, 1912, էջ 148, 283։

2 Ջալալեանց, II, 344—345։

3 Բարխուդարեանց, էջ 28։

4 Մ. Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1913, էջ 383. Նույն պատմիչն ունի Տկռակերտ տեղանունը, որը, հավանաբար, Տիգրանակերտի բարբառային ձևն է։ Անդ, էջ 343։

454. ԳԵՐԵԶՄԱՆԱՔԱՐ, սպիտակավուն քարից է, երկթեք և կափարիչաձև, կոտրված է երկու մասի. գրերը մաշված են և տեղ-տեղ ջարդոտված. տապանագիրը թեքության մի երեսին է, 4 տող.



ԱՅՍ Դ⌈ԻՐ ԴԱՆ⌉ՊԱ⌈ՆԻ . . . . . . ԵՂԲԱՒՐ Հ⌈ԱՄԱՄ ԻՇԽԱՆԻ|ԵՒ ՏՆ ՓՂԻՊԵԻ ԵՒ Տ̃Ն ՍՆՊԱՏԻ . . . . ԵՒ ԶՐԿ|ԵԱԼ Ի ՃՈՐՏ ՀԱՍԱԿԷ ԵԼԱՑ ⌊Ց⌋ԱՇԽԱՐՀԷՍ ԴԱՌՆ Թ⌈ՈՂԻ ՍՈՒԳ⌉. ՈՒ ԶԳԻՐՍ ԶԱՅՍ.| ՄԻ ՈՔ ԻՇԽԵՑԵ ՄԵՐՋԵՆԱ⌊Լ⌋ Ի ՍՄԱ. ՆԶՈՎԵԱԼ ԵՂԻՑԻ Ի ՔԷ. Ա̅Ց.:

Ծանոթ. *Ինչպես հայտնի է, Աղվանից Համամ թագավորը արաբների Բուղա ոստիկանի պահանջով սպանել է իր հարազատ եղբորը։ Այս տապանաքարը համարում ենք Համամի և իր եղբայրների կողմից սպանվածի վրա դրված, իսկ տապանագրի բովանդակությունը՝ այդ եղեռնական դեպքի արձագանք։*

*Հրատ. Ս. Բարխուդարյան, «Տեղեկագիր» ԳԱ, 1964, № 1, էջ 61—64։*